




Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ժողովրդականացած
գիտական գրքերի առիթով. Նամակ Ղուբայից.
Նամակ Գանձակից. Նամակ Խմբագրին. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատու հարցը.
Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲՈՐՍԱ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Այն
ընդ ական.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆԱՅՐԱՄ ԳԻՏԱԿԱՆ ԳՐՔԵՐԻ Ա-
ՌԻԹՈՎ.

Տարբանցիկ ժողովրդի մէջ գիտութիւնը, մաս-
նաւոր իրաւունք տալով հասարակութեան զանա-
զան խաւերում գիտութեան զէթ հիմնական մա-
տերիք.—հաւ մի շատ կարեւոր դործ, որին կարող
է և պէտք է նուիրել մեր թարգմանական—ժո-
ղովրդական գրականութիւնը: Ամեն տեսակ հա-
ցարակութեամբ գիտութեան տարբանցիկը աւելի
չօչալիլի և աւելի գործնական հետեանք կարող
է ունենալ, քան թէ այն քաղաքական, խրա-
տական մեթոդը, որը զգալի կերպով տիրապե-
տում է մեր գրականութեան զանազան ճիւղերի
վրայ:

Գիտութեան տարբանցիկը գործը, հաստատա-
պէս կարելի է ասել, ամենից քիչ ուղարկութիւն
է դրանք մեր մասով: Եւ, և համեմատաբար
շատ քիչ ոյժեր են եղել նրան նուիրված: Ներ-
կայումս թէ մեր ինքնաւորութիւնը և թէ թարգմանա-
կան գրականութեան մէջ շատ չնչին տոկոս են
կազմում այն գրքերը, որոնք գիտական բու-
սականութիւն ունենային, որոնք նուիրված լի-
նէին ոչ թէ գիտական բարձր, մասնաւորիտա-
կան հարցերին, այլ զէթ բովանդակէին իրանց
մէջ գիտական բացատրութիւններ և միջոցներ
ժողովրդի համար, ժողովրդի կենցաղավարութեան
համար:

Մեր ժողովրդի գիտականութեան պարագա-
մունքները, որոնց մասին ամեն օր գտնում են
թէ շատ հին և նախապետական եղանակով են կա-
տարվում, անկասկած մեծ օգուտ կը ստանային
և մեծ փոփոխութեան կենթարկվէին, եթէ մենք
ժողովրդին մատակարարէինք, ժողովրդականաց-
րած գրքերի միջոցով, զանազան այսպիսի գիտե-
լիքներ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ԱՎՆ ԸՆԴԱԿԱՆ»

Ա.

Այն տարին շատ անձրևային էր:
Չոր քարի վրա էլ խոտ էր բուսել, ով կը մոռա-
նայ: Աստուծո թաղանթներն էր անձրևը. գալիս
էր գալիս, չուռում էր, վերջ չը կար Մի ամիս էր
թէ աւել—հաշիւը կորցրել էին—երկնքը թղպրեւ
իրար վրա կոյտ կոյտ դառած, իրարից կպած էլ
շուր չը մնաց որ թափին, երկիրը աշխարհ ապա-
կաններ չկայծակը կրակ էր անում, երկնքը որո-
տում, սիրտ ճաքացնում: Բարի օրը միջնում էր,
սեանում, կարճանում: Ասած է, երկնքից ինչ
ընկաւ որ երկիրը չընդունի: Մարդաստան խոտ
էր կանգնած, մէկի տեղ երկուսը, երկնք էր դուրս
եկել, այնպէս շատացած, այնպէս հասած, մեծա-
ցած, որ մարդու խնքն էր տանում: Կանաչ ծով
էր դառել երկիրը աշխարհ, մի մի որ արեգակը
մտիկ էր տալիս, կասէր թէ Աստուած ինքն է
խաչակնքել, աղիւսը թրախ տուել վրան:
Գիւղացին տանը նստած, ձեռքը ծոցում դէպի

լիքներ, որոնք գիւղատնտեսութեան մէջ գիտնա-
կան արժէք ունեն:

Մի ժողովրդի մէջ նախապաշարմունքներն ար-
մատախիլ անելու ամենակարճ ճանապարհը նոյն
գիտութեան տարբանցիկն է, որը միայն կարող է
համոզեցուցիչ կերպով փոխել տգէտ հասարակու-
թեան թիւր կարծիքները բնութեան, օգտաբնու-
թեան, քիմիական և ֆիզիոլոգիական երևոյթների
վերաբերութեամբ:

Նոյնը կարելի է ասել և ուրիշ ամեն տեսակ
հարցերի վերաբերութեամբ: Տարբարդաբար այդ
ուղղութիւնը թէ մեր գրականութեան մէջ ամենա-
արհամարհվածն է եղել Այդ պատճառով մենք
չենք կարող անտարբերութեամբ նայել այն բոլոր
—թէ և թոյլ—աշխատութիւնների, զրքերի և
թարգմանութիւնների վրա, որոնք այդ ուղղու-
թեանն են պատկանում, և որոնք լոյս են տես-
նում հայերէն լեզուով: Ուստի մենք չենք կարող
մասնաինչ չանել այս օրերս մի ուղղութեամբ
մի թարգմանական գրքի վրա, որը կրում է «Բի-
մայի» նշանակութիւնը գործնական կեանքում:
Այդ աշխատութիւնը, որ լոյս է տե-
սել ունի Ս. Մուշեղեանցի թարգմանութեամբ, և
որը բաղկացած է աւելի քան 200 երեսից, խո-
սում է ընդհանուր քիմիայի, զանազան գազերի,
ջերմութեան, այրման գործողութեան, քիմիական
գիտելիքի, ջրի, վառելիքի, լոյսի, ածուխի, կեն-
դանական և բուսական քիմիայի, և քիմիական
զանազան հետաքրքիր երևոյթների մասին, բա-
նական մատչելի և ժողովրդին հասկանալի, տար-
բացած կերպով: Թէ և գրքի հայերէն թարգմա-
նութիւնը լեզուի կողմից ունի մի քանի անհա-
թութիւններ, բայց և այնպէս այդ գրքը—փա-
կազմում նկատում ենք, քիմիայի վերաբերու-
թեամբ մի ամփոփ, ժողովրդականացած աշխա-
տութիւն չէ նկատվում—կարող է բաւական օգ-
տակաւ լինել ընթերցող հասարակութեան հա-
մար իբրև գիտութիւնը տարբանցիկ մի աշխա-
տութիւն:

ՆԱՄԱԿ ՂՈՒԲՈՒՅՑ

Յուլիսի 23-ին

Գուցէ ոչ մի տարի Ղուբայում աւազակութիւ-
նը այնչափ խիստ տարածված չէ եղել, որպէս
այս տարի: Գաւառը կատարեալ պաշարման դը-
րութեան մէջ է գտնվում: Անանցնելի են դարձել

ճանապարհները և, որ զլիսաւորն է, քաղաքի ա-
ռաւորական յարաբերութիւնը կտրվել է գաւառի
հետ թանգաղէ է ամեն բան, որովհետեւ գիւղա-
ցիք ոչինչ չեն վստահանում բերել քաղաք. եթէ
պատահում է, որ բերում էլ են, կողոպտվում
են իսկոյն աւազակներից ճանապարհներում: Փոս-
տային ճանապարհներում օր ցերեկով կողոպտ-
վում են անցորդ ճանապարհորդները և գանակոծ-
վում են: Ոչ մի տարի, կրկնում են, աւազակու-
թիւնը չէ եղել այդպէս տարածված, որպէս հի-
մա. հաշուում են, որ 60 հոգու է համեմատ աւա-
զակների թիւը: Այդ պատճառով է, որ նրանք
մեծ երկուկ—տարաւի են գցել այժմս գաւա-
ռում: Հիւսիսի գիւղը, Հայկ Սիւրբէյ վիշապը և
քանի մի ուրիշները դրամական աուրքերի են
ենթարկվել աւազակների խմբերից: Գլխաւոր
աւազակները հիմա համարվում են՝ Ղուբայի
բանտից փախտական Նասր-է-դին բէգի խում-
բը, նոյն տեղից փախած Նիւրէտեցի—Ալի խում-
բը, Մեշաղի-Միւրադի և Քէլբա-Սէտտարի խում-
բը, ժողովրդական աշխատանքների տեղից փա-
խած Ամարեցի Օրուշ-Ալի խումբը, նոյն տեղից
փախած Ղուբայի Մեշաղի-Մեշաղի խումբը, Ալ-
փանցիների խումբը և այլն և այլն:

Այս օրերս ձերբակալվեցան Բուստովցու խա-
սի խումբը, 6 հոգով: Այդ խումբը գտնվում է և
աւազակ շուշեցի մի հայ, Շիրին Օվանեսով: Չորս
հոգի բերվեցան կալանաւորված, իսկ երկուսը
խասի և Միւրադի ծանր կերպով վիրաւորված է-
լին սայլերի մէջ: Նոյն իսկ Շիրին խումբը մօտե-
րումս կողոպտում է Ձիւղի գիւղում մի տուն, որ-
տեղից տանում են արծաթեայ գօտիներ: Նոյն
խումբը սպանել է տեղիս անտառային վարչու-
թեան մէջ ծառայողին (ՕՐԵՅԻՆՈՎ) և շատ ու-
րիշներին:

Նորեքում Բաղուի նահանգական դատարանի
բաժնում քննվեցաւ խուլուպցիների՝ Ալիարի, Ալի-
բէկի և միւս աւազակային խմբերի գործը: 18
յանցանքում մեղադրվում էին աւազակները: Նը-
րանցից մի քանիսը մեղադրվում են և բանտից
փախչելու գործում: Վերջինս դեռ չէ սկսվել:
Նոյն դատարանում անցեալ օրերը Ղուբայի
Մամեդ-բէկի գործին նայելուց յետոյ՝ վճիռ կա-
յացվեց 4 տարվայ Սիւրբ քաղաքի և 12 տարի ի-
րաւունքից զրկելուն: Մեղադրված փախչում է
դատարանից և հիմա էլ չէ գտնվում:

Երէկ ժամանեց Ղուբա մեր նոր գաւառապետ
պ. Ստոպանսկի, փոխվեցան նմանապէս և մա-
հալների պրիստանները: Յոյս կայ, որ այժմ գա-

խուղել է, մեր վերջն է. դուք էլ մոռացել էք,
Թափօր-անդաստան չէք անում, լաց չէք լինում:
Տէրտէրը հին բարեհոգի մարդկանցից էր: Ինքն
էլ այդ մարդն էր, տեղիցը կանգնեց, աչքերը բարձ-
րացրեց, ձեռքը երմբին զարկեց, մեղա կանչեց—

—Գիր են բացել, ասում է քառասուն օր, քա-
ռասուն գիշեր անձրև պիտի գայ:

Տէրտէրի գոյնը թուաւ:

—Ջրհեղեղ... ջրհեղեղն էլ քառասուն օր է ե-
ղել, ասեց,—մեր մեղքիցն է, աղաչեց, պաղա-
տեմք. մեր սուրբերի փէշը բռնեց:

Սահակի տղայ Թաթոսը տէրտէրին մի ուրիշ բան
էլ խմբարաւ Տեսել են, ասեց, մեր գետի մէջ եր-
կու տկոթ երեխայ են տեսել. հարցրել են թէ ով
է, ասել են մեղանից մէկը մահն է, միւսը սովը,
վայը եկել է ձեզ տարել: Տեսնողները եկել են
ամեն տեղ պատմել, էլ լաց, արտասուք չէ պահ-
վում:

Տէրտէրն անձայն առաջ ընկաւ, եկեղեցու դան-
դը քաշեց:

Միմեկ էլ Աստուծո սեղանի առաջ մի հատ
մոմ կայ վառած, տխուր այրվում է. մարդ ու
կնիկ ծնիկների վրա թափված, աղաչանք են ա-
նում: Տէրտէրը «Արի Աստուծո» է երգում. այն-
պէս ձայն է տալիս, կասեմ այսօր երկայն ու-
տիքի վերջին շարաթը չէ, այլ շարաւարանքի ու-
թաթ գիշերը:

Առող բարօրութեան մէջ կը գտնվի և մեծ ե-
ռանդ գործ կը դրվի աւազակներին կալանաւո-
րելու մասին: Աւելորդ չէր լինի ասել, որ առա-
ջին հարը նրա մէջ է երևում, երբ ինքը ոստի-
կանութիւնը խիստ ազդեցութիւն է ունենում
գիւղացիների վրա, երբ վերջիններս օգնում են
ոստիկանութեանը, ի հարկէ, որ հեշտ էլ է լի-
նում կալանաւորել աւազակներին: Այն վաղ էր,
երբ ահ ու տարաւի էր գցել ոստիկանութիւնը
աւազակների վրա: Գողութիւն, մարդապանու-
թիւն քիչ էր պատահում և վերջացել էր համա-
րեա. դրանք այն ժամանակներում էին, երբ ոս-
տիկանապետներ էին պ. պ. Բախիշ-բէկ-Մարդա-
նահաւ և Զ-լաբաւան: Հրաւ էլ ասգաս պատկա-
ռանքով են յիշում գործին անձուէր այդ մարդ-
կանց եռանդոտ գործունէութիւնը:

Մ. Ս.

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Յուլիսի 22-ին

Այս տարի մեր ժողովրդը անհամբեր սպա-
սում էր տեղիս ծխական ուսումնարանի ուսու-
ցիչներին հիմնական փոփոխութեանը: Բայց ինչ
ինչ պատճառներով, մեր հողաբարձները ա-
ռանց մի մաղի չափ փոխելու, նոյնութեամբ թո-
ղեցին ուսուցչական խումբը, ոմանց խղճաւոր, ո-
րովհետեւ օտար երկրացի են և ճանապարհված
ընտանիքով, և ոմանց էլ որովհետեւ տեղացի են
և նրանց խաթրել չեն ուղում կոտորել: Բայց, ինչ-
պէս հաստատ լսեցինք, ուսուցիչները մի քանիսը,
տեսնելով որ ժողովրդը իրանց չէ համակրում,
արդէն իրանց համար տեղեր են որոնում: Ցան-
կալի կը լինէր, որ հողաբարձները, այդ հեռա-
ցող ուսուցիչներին տեղ, այնպիսիներին ընտրէին:
որոնք վերջ դնէին ուսուցչական խմբի մէջ ին-
տրիկաններին և խուլութիւններին:

Մեր աղքատանոցի դրամապետը հաւ մի քա-
նի տարիներ է, որ անգործադրելի է մնացել:
Այդ պատճառով անցանքներում մի քանի անգամ
ժողովներ եղան, և ժողովը այն եղանակացութեան
էր հասել, որ այդ գումարը հաւասարապէս
բաժանվի սուրբ Լուսաւորիչ և ս. Թովմանէս
եկեղեցիների վրա և գործադրվի աղքատե-
րի ապահովութեան համար: Այդ չիրագործվեց.
կրկին ժողով եղաւ և այս անգամ վճռեցին, որ
տեղս մի կենտրոնական ծխական ուսումնարան
չինվի, որի մէջ մեծ կարօտութիւն կայ: Այժ-
մեան ուսումնարանը մեծ անյարմարութիւն ու-

ժամը դուրս եկաւ Անձրեւ շուշալի գալիս է,
արարած աշխարհ կորել է, միմեկ, սեպեց. մի
տեղից ձայն ու ծպուտ չէ գալիս. գորտը, որ
այսպիսի գիշերները բաց է անում բերանը, ձորե-
րում ձայն տալիս, հիմա լեզուն իրան է քաշել,
կորել ու մեռնել վարար անձրևի խշռոցն է, որ
ամեն տեղ բռնել է:

Շինականները քարացել են: Մէկը թառանչ է
քաշում, միւսը Աստուծո է կանչում:

—Մատաղ անեմք, մատաղ, խօսում է մէկը
խաւարի մէջ:

—Հա, հա, մատաղ, խօսում են շատերը:
Պառաւ Սալբին, որ ժամի չէմքում կուչ եկած,
լսում էր ախ ու վախ անկողի, ամենից յետոյ
մրմնջաց:

—«Հ», մատաղն էլ է մեր գլխին խուղել,
սուրբն էլ. այսքան արիւն հեղեղ ով է տեսել,
փառքդ շատ, Աստուծո...

Վճռում են որ մատաղ անեն, ցրվում են:

Բ.

Ան գիշերը լուսացաւ, արեգակն ու թանձր
թղպերը կուլւ են տալիս միմեկանց հետ: Նստե-
րը թրջած խեղճ-խեղճ կանգնած են, գետի ձայնը
երկնքին է հասնում:

Սահակի տղայ Թաթոսի տունը այսօրվանից
ուխտատեղի էր դառել: Մի մի գալիս էին, գնում.
կանաչք միմեկները ծեծելով պատմութիւններ էին

Թատրոնում ժողովրդական կենտրոնի պատկերներ պատմող յայտնի պ. Վեյնշտեյնի տուեց մի ներկայացում Պարոնը մեծ ձիւր ունի այդ տեսակ պատկերները եւսմանը պատմել, բայց այդ պատմածները մէջ ոչինչ նոր բան չը կար. բոլորն էլ հին, հազար անգամ լսված բաներ էին Հասարակութիւնը բաւական կար:

Այս օրերս նախկին «Վեյնշտեյն» կոչված այգիում ձեռնարկեց պ. Շտարկեր տուեց մի ներկայացում. պարոնին կարելի է համարել շատ հմուտ իր արհեստի մէջ: Նա բաւական մարդ էր կերպով է բոլորը կատարում, առանց ձանձրացնելու հասարակութիւնը: Պարոնը բացի ձեռնարկական ներկայացումից ցոյց տուեց և մի քանի «քնաշարժական» (սոմնաբուլիզմ) և հիպնոտիկական փորձեր, որոնք նոյնպէս անշուք թւին ունեցան:

Քուլթայի նահանգի Օւնի քաղաքից մեկ դուրս էր, որ այնտեղի քահանայն ահա երեք ամսից աւելի է, որ գնացել է Քուլթայի, առանց հազար պէտքերի թողնելով իր ծովային ֆառանային Քուլթայիսում այդքան երկար մնալու ոչ մի ներքին պատճառ չը կայ և այդ պատճառով Սիւրի հայ ազգաբնակչութիւնը շատ վրդովւած է, քանի որ հարկաւոր եկեղեցական խորհուրդներ կատարող չը կայ և ժողովուրդը ստիպւած կը լինի դրանց կատարելու համար դիմել օտար եկեղեցու պաշտօնականներին, ինչպէս որ արդէն փորձեր եղած են: Գարձնում ենք հողերը վարչութեան, ուշադրութիւնը այս անգամ կան երկուքի վրա:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հետեւել սակագինն է նշանակել Թիֆլիսի մթերանոցում վաճառվող մթերքների համար, ներկայ օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի մէջը: Այդ ժամանակվա միջոցում լաւ աղած ալիւրից թխած հացը կա՝ յինչ ֆունտը 5 կոպ., ցորենի ալիւրից առաջին տեսակի 3 կ., իսկ երկրորդը 2 1/2 կ., նոյն ալիւրից տեղական թնթիւններում թխած առաջին տեսակի 5 կ., երկրորդը—3 1/2 կ. և երրորդը—3 կ., լաւաշների առաջին տեսակը 5 կ., երկրորդը—4 կ.: Տաւարի միսը առաջին տեսակ 7 կոպ., երկրորդը—6 կ., սուխլի—13 կոպ.: Այլապէս միսը ֆունտը 8 կոպ.:

«Тифл. Листога» լրագիրը հաստատ աղբիւրներից հաղորդում է, որ անդրկովկասեան երկաթուղին շուտով կառավարութեան ձեռքն անցնելու պատճառով Անդրկովկասեան երկաթուղու կառավարիչ նշանակվում է Կոլոլով-Վորոնչովսկին: Բոստօնեան ճանապարհի նախկին կառավարիչ պ. Ստոիկով:

Նոյն լրագիրը հաղորդում է, որ երկուշաբթի, մեռելոցի օրը, Խոջիվանքի գերեզմանոցում հանգուցեալ Գաբրիէլի բարեկամները և ծանօթները շրջապատել էին նրա գերեզմանը, հայկական սովորութեամբ, օրհնել տալու նպատակով: Այս տարի համեմատաբար աւելի քիչ ժողովուրդ կար գերեզմանոցում:

Կայսերական աշխարհադրական ընկերութեան աշխատակից անդամները, Ե. Մարիով և Ե. Կովալէվսկի եկել են անդրկովկասեան երկրորդ գիտական նպատակով: Այդ գիտական ճանապարհորդութեանը մասնակցում են Մոսկույի համալսարանի ուսանող Ս. Ֆոմին-Պիտոմիլովը, բնական գիտութիւնների կանդիդատ կոմ Ե. Բոստօնցէի, Ս. Շպիլկովսկի, իրաւաբանական գիտութիւնների կանդիդատ Ենդիարեանց, և նկարիչ Ս. Խանով: «Каре» լրագրի ստացած տեղեկութիւնների համեմատ, այդ էկսպէդիցիայի անդամները դիտաւորութիւն ունեն այցելել Թիֆլիս, Երևան, Էջմիածին, Արաբիկ, Արարատ, Գուգու, Կարս, Արդա-հան, Արդանուշ, Արդուին և Բաթում:

Ֆինանսների մինիստրութիւնը, ինչպէս լսել է «Т. Лист» լրագիրը, մտադրութիւն ունի Երևանում բաց անել պետական բանկի բաժին:

«Մշակի» անցեալ № 86 հրատարակեցաւ, խմբագրութիւնից անկախ պատճառներով, շարքի երեկոյեան, և իսկոյն տարածվեցաւ Թիֆլիսի բաժանորդներին, իսկ օտարաբաղադրացիներին այդ համարը ուղարկվեցաւ միայն հետեւել օրը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԻ ՀԱՐՑԸ

Նորերս ֆրանսիական պատգամաւորները ժողով անդամները մէկը մի առաջարկ ներկայացրեց այդ ժողովին, միասնաբարութիւնը (դուէ) օրէնքով արգելելու մասին: Խօսելով միասնաբարութեան վնասակար սովորութեան մասին, այդ պատգամաւորը առաջարկում էր հանրապետական կառավարութեան խիստ միջոցներ ձեռք առնել միասնաբարութիւնը վերացնելու համար, և մինչև անգամ ի նկատի ունենալով այդ հարցի կարևորութիւնը, այն համոզմունքն էր յայտնում, որ այդ առաջարկը անցեալագիւղի պէտք է համարել:

Սակայն պատգամաւորները ժողովը համարեա սառնամարտութեամբ վերաբերվեց դէպի այդ ինքնուրույն ինքնան բարի, բայց շատ միամիտ առաջարկութիւնը, միասնաբար անցեալագիւղի չը համարելով նրան: Եւ եթէ այդ հարցը դանդաղ չը շարունակում մի փոքր խօսակցութեան նիւթ դարձաւ, այդ էլ դիտաւորապէս այն պատճառով, որ դա կապված էր մինիստր նախագահ Ֆլօրէի և զինեւրալ Բուլանգէի միասնաբարութեան գործի հետ, որը, ինչպէս յայտնի է, մեծ աղմուկ հանեց ամեն կողմ: Պատգամաւորների ժողովին այդպիսի առաջարկութեան նորից ներկայացնելու պատճառը եղել է իսկապէս Ֆլօրէի և Բուլանգէի միասնաբարութեան դէպքը:

Հաստատապէս կարելի է ասել, որ այդ տեսակ առաջարկութիւնը, այսպէս թէ այնպէս, դեռ երկակի ժամանակ de facto գործադրութիւն չի էլ կարող գտնել, որովհետեւ այդտեղ չը յայտնվում է անհատական կենսիկայի այնպիսի մի կողմը, որը դժուար թէ ամբողջով օրէնքի շրջանակների մէջ: Մեր խօսքը պատուի հարցի մասին է:

Նոյն իսկ ֆրանսիայում, այլ և եւրոպական շատ երկրներում, որտեղ միասնաբարութիւնը գործադրվում է, շատ անգամ մեծ խօսակցութիւն է եղել միասնաբարութիւնը վերացնելու մասին: Նոյն իսկ ֆրանսիայում օրէնքը համարեա թէ կողմնակի միջոցներով արգելքներ է յարուցել միասնաբարութեան դէմ, բայց այդ բոլորը ոչ մի դրական հետեւեք չէ հասցրել: Եւ այսօր միասնաբարութեան դէպքեր են լինում ոչ թէ երկտարաբարութիւն, ոչ թէ միայն երկտարաբարական ոգեւորութեամբ վառված անձինքների, ոչ թէ միայն սէր ու խանդով կուրացած անձինքների մէջ, որոնք պատրաստ են իրանց անձը դնել շուրջ սիրած կնոջ համար, այլ և այնպիսի անձինքների մէջ, ինչպէս է Ֆլօրէ, չենք խօսում Բուլանգէի մասին:—Որի նման մարդիկ շատ լաւ են դուրս, որ իրանց դանդաղ արարմունքները համարեա նոյնքան հասարակութեան պատուին են վերաբերում, որքան և իրանց պատուին, քանի որ իրանց պաշտօնը և իրենց այդպիսի յարաբերութեան մէջ է դրել դէպի հասարակութիւնը, դէպի աղբը:

Գարեբ են արդէն, որ միասնաբարութեան սովորութիւնը արմատացել է եւրոպական մի քանի երկրներում, դարձել են անցել այն ժամանակից, երբ միջնադարեան ասպետութիւնը վաթիւղ էր նոյն իսկ ամենաչինչ պատճառով կենսից դուրս եկել պատուի համար: Եւ միջնադարեան այդ սովորութիւնը այնպէս խոր արմատ է լուսնել այժմ մեան հասարակութեան մէջ, որ նրան միանգամայն արմատախիլ անել անկարելի է, և դարմանալի չէ, թէ ինչու նոյն իսկ փոքրիկ հրապարակական վիճաբանները, ինտրիգաները, բամբակաւորները և ստոր վարմունքները իսկոյն երես առ երես են դուրս բերում հակաաւարտներին, որոնք սրով կամ ատրճանակով ինքնամոռացութեան հասած կատաղութեամբ միմեանց վրա են յարձակվում, միմեանց արհեստ են թափում:

Ներկայ ժամանակում, ի հարկէ, պատուի հարցը ուրիշ տեսակ է հասկացվում, քան թէ հասկացվում էր առաջ, բայց և այնպէս ինքնահանազանութեան, և պատախնդրութեան իսկական ըզրացմունքը շարունակում է իր մեծ դերը կատարել, այնպէս որ խիստ օրէնքը անգամ չէ կարող դանդաղ վերջ տալ միասնաբարութեան սովորութեանը, որը ամեն տարի արագին թաւ դոնէր է տանում:

Արեւելեան սովորութեամբ, արեւելեան մարդու հասկացողութեամբ և կարծիքով, ի հարկէ, յիմարութիւն և դժուար է մի ինչ որ պատուի հարցի համար հրապարակ դուրս գալ, միասնաբար-

տել և կենսից վտանգի ենթարկել. արեւելքի մարդու համար պատուի հարցը իսկապէս մի շատ մուլ, անորոշ և համարեա թէ գոյութիւն չունեցող զգացմունք է: պատուի համար, պատուը պաշտպանելու համար արեւելքին, նոյն իսկ կըրթված արեւելքին, միասնաբարութեան չի դուրս գալ, սակայն այդպէս չեն նայում այդ հարցի վրա արեւմուտքում և մանաւանդ միջնադարեան ասպետութեան սովորութիւններով ներշնչված հասարակութիւնները մէջ:

Յամենայն դէպի աւելի լաւ և աւելի դուրի է պատուի հարցի վերաբերութեամբ դիւրացեաց լինել ինչպէս տեղի, քան թէ անդգայ ինչպէս չոր փայտ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրները հաղորդում են, որ Թէհրանում սով է: Ամեն առետուր դադարած է:

—Եւրոպական լրագիրներին Կ. Պոլսից հեռագրում են, որ Բ. Գուռը դիտաւորութիւն ունի դիմել պետութիւններին մի եւսանդոտ յայտադրով, որի մէջ կը բողբէ Մասսովայի գրաման դէմ: Այդ յայտադրի բնագիրը արդէն մշակված է մինիստրների խորհրդում: Այդ անցքի պատճառով Ֆրանսիան և Թուրքիան մոտեցան միմեանց:

—Բրիտանից «Հիւսիսային գործակալութեան» հեռագրում են, որ կարգինալ Սիւրբինո դէմ է այստեղից Ֆրիդրիխսթէ իշխան Բիւսարիին այցելելու համար: Այդ տեսակցութիւնը, որպէս ենթադրում են, կապ ունի Վիլհէլմ կայսրի Հոօմ գնալու դիտաւորութեան հետ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՐԻԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յուլիսի: Թուրք թագուհի Օւզա Կոնստանտինովնա երէկ ծնեց մի դուստ, որի անունը դրվեցաւ Խրիստօֆօր:—Մեծ իշխան Միխայիլ Նիկոլաիւի իր որդու, Մեծ իշխան Սերգէ Միխայիլիչի հետ ճանապարհ ընկաւ Ղզլէ-Ղիւ: Հրատարակված է պետական խորհրդի կարծիքը թող տալու մասին պետական կառավարիչի մինիստրին գիւղատնտեսութեան դանդաղ ճիւղերում հիմնաւոր և մասնագիտական տեղեկութիւններ ունեցող մի քանի անձանց, որոնք պէտք է կատարեն պետական կառավարիչի մինիստրի ցոյց տուած տեղերում հետեւել պարտաւորութիւնները: 1) տեղեկութիւններ հաւաքել և հասցնել ինտրոմիսկան վարչութեանը կառավարութիւնը ունեցող մի քանի անձանց, որոնք պէտք է կատարեն պետական կառավարիչի մինիստրի ցոյց տուած տեղերում հետեւել պարտաւորութիւնները: 2) բացատրել գիւղատնտեսութեան նրանց անտեսութեան պակասութիւնները և նրա տէնիսկան բարեօրոյն միջոցները, այդ բանի համար հարկաւոր խորհուրդները տալ և հրապարակական ընթերցանութիւն կազմել կառավարիչներին բացատրելու համար գիւղատնտեսութեան այդպիսի բարեօրոյն նշանակութիւնը: Հսկել վնասակար միջատների երակու վրա և ղեկավարել նրանց հետ կռիւնը գործին: Վերջիւնալ մասնագետ անձանց վարձատրութիւն նշանակվում է 1200 ռուբլուց մինչև 3000 ռուբլի տարեկան, և բացի դրանից իւրաքանչիւրին տրվում է 400 ռ. միանուագ ծախսերի համար և 400-ից մինչև 600 ռ. ճանապարհի ծախսերի համար:—«Journal de St. Petersburg» լրագիրը բացատրում է մարկիզ Սալուբրիի ճառի բարեկաշտ տպաւորութիւնը, որը հաստատում է պետութեւրդեան տեսակցութեան խաղաղաբար նշանակութիւնը:—Լրագիրները հաղորդում են, որ ժողովրդական լուսաւորութեան միջոցաբեր օգոստոսի կէսին կըրթալ տեսնելու համարաբանները և ուրիշ բարձրագոյն դպրոցները: Ամենից առաջ կըրթալ կազմին համալսարանը տեսնելու:—Այսօր Պետերբուրգ հասաւ Էլզա-Լօթարինգիայի փոխարքայ իշխան Հօֆնիլդ:

ԽԱՐԿՈՎ, 30 յուլիսի: Իլինսկի տոնավաճառը Պոլտավայում բաւարար կերպով վերջացաւ. գիւղական ապրանքները ծախվեցան, մանաւանդ զինւորների համար հազնիլի և ուղտի բրդից գործած մահուղը. մեծ յոյս ունեն աշխատային առեւտրի վրա:

ՓԱՐԻՉ, 30 յուլիսի: Բանւորական շարժումը մի փոքր հանգստացաւ. յոյս ունեն, որ համաձայնութիւն կը կայացնեն օրավարձի հարցի մասին: Ֆլօրէ ընդունեց գործադուլ արած բանւորների պատգամաւորութիւնները և կուպալաւորանի:

ՊԵՏ, 31 յուլիսի: Այսօր կէսօրից յետոյ 3 ժամին դուրս եկաւ այստեղից երկաթուղու առաջին գնացքը, որը Սերբիայի և Բոլգարիայի միջով անցնելով, ուղիղ յարակցութիւն ունի Կ. Պոլսի հետ: Այդ գնացքով ճանապարհ ընկան ուսուցչական արքունական ճանապարհների կառավարիչը, բոլգարական երկաթուղու ղեկավարը, մասնաւոր ներկայացուցիչները և բազմաթիւ պատաւոր հիւրեր:

ՀԱՅՍ, 30 յուլիսի: Սերբիական թագուհի Նատալիա այսօր առաւօտեան ճանապարհ ընկաւ այստեղից դէպի Փարիզ:

ՎԱՐՇԱՎԱ, 31 յուլիսի: Երէկ այստեղ հասան երկաթուղային խեղդիլ որդիքը, և վաղը նրանք գնում են Պետերբուրգ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յուլիսի: Մեծ իշխանուհի Օւզա Ֆեօդօրովնա իր որդու՝ Մեծ իշխան Ալեքսի Միխայիլիւիչի հետ երէկ ճանապարհ ընկան դէպի Բորժօմ: Կրանսօնէեան մեծ դորահանդէսները կը սկսվեն օգոստոսի 3-ին և կը վերջանան 9-ին:

ԼՕՆԳՕՆ, 31 յուլիսի: Համայնքների ժողովի նիստերը յետաձգված են մինչև նոյեմբերի 6-ը:

ՓԱՐԻՉ, 31 յուլիսի: Բանւորների համաձայնութիւնը գործ տուողների հետ չը կայացաւ. բանւորները վճռեցին շարունակել գործադուլը: Քաղաքային խորհրդի բիւրօն լրագիրներում յայտնի կերպով մեղադրում է օստիկանութեան, իբր թէ, կուպիտ վարմունքը Էդի թագման ժամանակ: Օգոստոսի 8-ին կայանաւորված 40 բանւորները դատաւարված են բանտարկութեան երկու շաբաթից մինչև 3 ամիս ժամանակով:

ԲԵՐԼԻՆ, 1 օգոստոսի: Լուր է տարածվել, որ կոմս Մուլտի, իր խնդիրներ համաձայն, արձակված է զօրքի գլխաւոր շտաբի պետի պաշտօնից, որի մասին յայտարարված է չափազանց ողորմած խօսքերով կազմված հրովարտակի մէջ: Մի և նոյն ժամանակ կոմս Մուլտի նշանակված է երկրորդ պաշտպանելու համար կազմված յանձնաժողովի նախագահ: Զօրքերի գլխաւոր շտաբի պետ նշանակված է կոմս Վիլհելմ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 օգոստոսի: Պահեստի զօրքում գտնվող զինեւրա-մայօր իշխան Վիտալիսկի նշանակված է Ստորաբանի նահանգապետ և Աստաբանի կոզակների զօրքի առաջնի:

ՎԻԵՆՆԱ, 2 օգոստոսի: Այստեղի լրագիրները համարկութիւն են յայտնում Կորուրգեան իշխանին այդ վերջին բոլգարական դահլ գրաւելու միամտեակի առիթով. բայց կիսապաշտական լրագիրները լուրսիւն են պահում, ի բաց առնելով «Sontags Zeitung» լրագիրը, որը կարծիք է յայտնում, թէ Կորուրգեան կառավարութիւնը ունի չը բերեց Բոլգարիային, բացի վնասից:

ՀՌՈՄ, 2 օգոստոսի: Ռուսաւորները, Գերմանիան, Անգլիան, Աւստրո-Ունգարիան և Սլաւոնիան յայտարարեցին, որ Մասսովայում և նրա ցամաքի վրա անձնատուր լինելու պայմանները անգործադրելի են. իսկ բոլոր մնացած պետութիւնները ուշադրութեան առան այդ հանգամանքը, համաձայնվելով մի և նոյն ժամանակ խտրական յայտադրի հետ, յուլիսի 25-ից: Մասսովայից ըստացված պաշտօնական տեղեկութիւնները համեմատ, օգոստոսի 8-ին 800 բաշխուղակները և աստաւորինացիները բաշխացած դորաթիւնը, ուր մի կապիտանի և երեք պօրուչիկների հրամանատարութեան տակ արշաւեց Դէքերի վրա, յաղթվեցաւ այն պատճառով, որ աստաւորինացիները դաւաճանեցին, անցան արիւնիացիների կողմը և յարձակվեցան խաղաղիւնքի վրա: Նրեք օֆիցերներ սպանվեցան: Բաշխուղակների և Դէքերի կորուստները զգալի են:

Կ. ՊՈԼԻՍ, 3 օգոստոսի: Մասսովայի խաղաղիւնքի հետ միացնելու պատճառով, սովորական շատ կասկածոտ է դարձել և հրաժարվում է վաւերացնել սուէդեան դաշնագիրը: Լուր է տարածվել թէ Բուսաց դեսպանը յայտնել է Բ. Դրանը, որ Ռուսաստանը երբէք հաւանութիւն չի տալ վերոյիշեալ միացման համար:—Բ. Գուռը 34 միլիօն ֆրանկի փոխառութիւն արաւ: Այդ գումարի կէսը կը տալ օսմանեան բանկը, իսկ միւս կէսը կը տան մի քանի բանկեր Գալատայում: Պայմանները շատ ձեռնառու են համարում: Թուրքիայի համար Բ. Գուռը արտասանման իր ներկայացուցիչներին մի մանրամասն յայտադրի ուղարկեց Մասսովայի հարցի վերաբերմամբ պետութիւններին հաղորդելու համար: Երէկ հասաւ այստեղ Վիլհէլմայից Սերբիայի և Բոլգարիայի միջով երկաթուղու առաջին գնացքը: Ոչինչ հանդիսաւոր դիմաւորութիւն տեղի չունեցաւ:

Типографія Канцелярії Главнач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. наз.